

72

14

336.2

2-14

1931

1 MAR 2010
166

336.2

Հ-14

Այս

ՈՒՆԵՏԱՐՆԵՐ ԲՈԼՈՐ ՅԵՐԿՐՆԵՐԻ ՄԻԱՑԵՔ

**1931 ԹՎ.Ի ՄԻԱՍՆԱԿԱՆ
ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՐԿԻ
ԱՐՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

ՀՐԵՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ ՀԽՍՀ ՖԻՆԱՆՍԱԿԱՆՈՒՄԻ

ՅԵՐԵՎԱՆ

1981

27806

ՊԵՏՏՐՈՍԻ ՏՊԱՐԱՆ
ԳԼՍԿԼԻՏ 6602 (F)
ՊԱՏՎԵՐ 3286
ՏԻՐԱԺ 2500

1931 թ. ՄԻԱՍՆԱԿԱՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱ-
ԿԱՆ ՀԱՐԿԻ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Մեր Այժմյան ամենաեղանակալի և կարեւորագույն խնդիրներն են խորհրդային յերկրի ինդուստրացումը և գյուղի սոցիալիստական վերակառուցումը:

Խորհրդային իշխանության բոլոր ձեռնարկումները ուղղված են դեպի արդյունաբերության և գյուղատնտեսության զարգացումն:

Աճում ու ավելանում են գործարանների թիվը, գզալի չափով զարգանում է գյուղատնտեսությունը:

Սակայն միանգամայն պարզ է, վոր մտերբ-մտեր տնտեսություններով, առանց կոլեկտիվացման ու մեքենայացման գյուղատնտեսությունը հարկավոր չափերով չի կարող զարգանալ: Այդ ամենապարզ ճամարտությունը այժմ հասկանում է ամեն մի գյուղացի և նա շատ լավ գիտի, վոր աշխատավոր գյուղացիության համար ամենաձեռնառու ճանապարհը դա կոլեկտիվացման ճանապարհն է:

Հենց այդ է պատճառը, վոր այժմ աճում և ծաղկում է կոլեկտիվացումը, գյուղի սոցիալիստական վերակառուցման հաղթական յերթը:

Կուսակցության և խորհրդային իշխանության բոլոր տնտեսական ու քաղաքական միջոցառումները գյուղի վերաբերմամբ ուղ-



12512-57

դիմած են կոլլեկտիվացմանը և գյուղատնտես-
տութեան զարգացմանն ու մեքենայացմանը
ամեն կերպ աջակցելու:

Նույն նպատակն ունի նաև մեր հարկային
քաղաքականութիւնը, վորը կուսակցութեան
և կառավարութեան քաղքականութեան ան-
բաժան մասն է կազմում:

Այդ տեսակետից խոշոր դեր է խաղալու
այս տարվա միասնական գյուղատնտեսա-
կան հարկի որոշումը:

Ամեն կերպ ուժանդակել կուրանտեսու-
թեան բարձրացմանը, տնտեսագիտ. ամբիւն-
դել նրան, դնել թափել արտոնված վիճա-
կում, աջակցել չքավոր և միջակ աշխատավո-
րական տնտեսութեաններին ցանքերն ու անա-
սուններն ավելացնելուն, կոլլեկտիվացման
հիմունքներով վերացնել կուլակութեանը
վորպէս դատակարգ և լուծել հացահատիկա-
յին, անասնապահական ու տեխնիկական մը-
շակութեան պըրթիւմները: Ահա այն հիմնա-
կան նպատակը, վոր դնում է միասնական
գյուղատնտեսական հարկի նոր որոշումը:

**Ավելի մոտից ծանոթանալու այդ որոշում-
ին, մասնավորապէս արտոնութեաններին
հետ:**

Ամենից առաջ ամեն մի գյուղացի պէտք
է իմանալ, վոր գյուղահարկը հաշվվում է և վան-
ձվում է տնտեսութեան ամողջ յեկամտի հա-
մեմատ:

Վորքան բարձր է յեկամտի գումարը,

այնքան ավելի յէ տնտեսութեան հարկի չա-
փը:

Յեթե վորեւ յեկամտի աղբյուրի համար
սահմանվում է վորեւ արտոնութեան, դա նը-
շանակում է, վոր հարկի չափը ևս իջեցվում է:

Գյուղահարկի արտոնութեաններն ընդ-
հանրապէս պէտք է բաժանել յերկու մասե-
րի: Առաջինը յեկամտի աղբյուրներին վե-
րաբերող արտոնութեաններն են, իսկ յեր-
կրորդը զուտ հարկային, այսինքն՝ հաշվար-
կված հարկից կատարվող գեղջերը (չիջում-
ները):

Այժմ տեսնենք հարկման ինչպիսի ձեւեր և
արտոնութեաններ և սահմանել որոշումը կու-
րանտեսութեաններին, գյուղացիական չքավոր
և միջակ տնտեսութեաններին համար:

1. Կոլլեկտիվ տնտեսութեաններին իարկ-
ման կարգը և նրանց տրվող արտոնութեաննե-
րը:

Որոշումն ասում է՝ կոլլեկտիվ տնտեսու-
թեան հարկը հաշվվում է նրա ընդհանուր յե-
կամտի համեմատ:

Ընդհանուր յեկամուտը վորոշվում է կու-
րանտեսութեան տարեկան հաշվետվութեան
տվյալների հիման վրա: Յեկամուտը վորոշե-
լու այսպիսի կարգ սահմանելիս որոշումն այն
նպատակն է ունեցել, վոր ամեն մի կուրանտե-
սութեան շահագրգռի կանոնավորել իր հաշ-
վապահութեանը, ունենա յեկամուտների լը-
րիվ և ճիշտ հաշվառում:

Սօսկայն գյուղհարկի յենթակա յեն կոլտնտեսության վոչ բոլոր յեկամուտները: Որենքն ասում ե, վոր կոլտնտեսության հաշվապահական կարգով վորոշված յեկամուտներից հանվում են՝

ա) անբաժանելի և հասարակական ֆոնդերին հատկացվող գումարները, որինակ՝ կուլա-կրթական, պարզեվատրման, սերմային և այլն.

բ) արտոնությունների կարգով արվող բոլոր գեղչերը.

գ) կոլտնտեսության վոչ-գյուղատնտեսական ձեռնարկությունների ոգտագործման հետ կապված բոլոր արտադրական ծախսերը:

Բացի դրանից կոլտնտեսության ընդհանուր յեկամտից հանվում ե նաև յեկամտի այն մասը, վորը բաժին ե ընկնում կոլտնտեսության կազմի մեջ գտնվող հետևյալ անձանց՝

ա) շքանշաններով պարգևատրված անդամներին.

բ) կարմիր բանակայիններին (շարքային և Պետկազմին պատկանող).

գ) նախկին կարմիր գվարդիականներին և կարմիր պարտիզաններին.

դ) ռազմականացված պահակախմբերում ծառայողներին.

ե) սիլիցիայի շարքային և վարչական կազմում ծառայողներին.

զ) պատերազմի և աշխատանքի հաշմանդամ-

ներին, յեթե նրանք պատկանում են հաշմանդամության առաջին յերեք խմբերին:

ը) կուլտիության գեմ կատարած յելույթների համար կուլտիների կողմից սպանված անձանց ինչպես և պաշտոնական պարտականությունների կատարման միջոցին, կամ կատարման հետևանքով սպանված անտառային աշխատողների՝ այրիներին և անչափահաս զավակներին, մատնանշված անձանց մահից հետո 5 տարվա ընթացքում:

թ) Մանկատներից կոլտնտեսության մեջ ընդունած սաներին և վորք յերեխաներին:

Հիշված արտոնությունները տալու կարգը պարզենք որինակներով: Որինակ մի կոլտնտեսության յեկամուտը հաշվապահութան տվյալների համաձայն հավասար ե 50.000 ռ.: Կոլտնտեսությունը վորոշել ե անբաժանելի ֆոնդին հատկացնել 1000 ռ., կուլտկրթական, սերմային և այլ ֆոնդերին 1500 ռ.—ընդամենը 2500 ռ.:

Այդ գումարը հանվում ե ընդհանուր 50.000 ռ. յեկամուտից և այդպիսով մնում ե 47.500 ռուբլի հարկվող յեկամուտ:

Նույն կոլտնտեսության կազմի մեջ մրտնում են յերկու անդամ-միլիցիոներներ, հինգ կարմիր բանակայիններ, կարմիր դրոշի շքանշանով պարգևատրված յերեք անդամներ և վեց հաշմանդամ (16 հոգի):

Յենթադրենք կոլտնտեսության ամեն մի անդամին բաժին ե ընկնում 200 ռ. յեկամուտ:

Այս դեպքում 10 անդամին հասանելիք չեկո-
մուտք, այսինքն 3200 ս. ($200 \times 16 = 3200 \text{ ս.}$)
Հանձնում է կոլտնտեսության մնացած 47.500
 ս. յեկամտից:

Բացի այդ կոլտնտեսությանը սննի դար-
բնոց, փոքր արտադրական ծախքերը կազմում
են առհնձր թե 2200 ս. : Ուրեմն մնացած ընդ-
հանուր յեկամտից պետք է հանել նաև այդ
 2200 ս. և այդպիսով կմնա հարկվող յեկամուտ
ընդամենը 42.000 ս. :

Կենդանաբուծությունը և կաթնատնտե-
սությունը զարգացնելու նպատակով հարկից
միանգամայն ազատվում են կոլտնտեսու-
թյուններին պատկանող ամեն տեսակի անա-
սունները, (կովեր, յեգներ, վոչխարներ, խո-
զեր և այլն):

Դրա հետ միասին անասունների կերի բա-
զան ուժեղացնելու նպատակով կերի արմա-
տապտուղների և ցանովի խոտաբույսերի յե-
կամուտը հավասարեցվում է հացահատիկա-
յին ցանքի յեկամտին:

Նշանակում է, փոքր յեթե կոլտնտեսությու-
նը մեկ հեկտար ցորենից կամ դարձուց ստաց-
վել է առհնձր թե 70 ս. յեկամուտ, իսկ կերի ար-
մատապտուղի կամ ցանովի խոտի մեկ հեկ-
տարից 200 ս. յեկամուտ, ապա այդ կոլտնտե-
սության հարկի յենթակա յեկամուտը փոք-
րելիս ցանվոր խոտաբույսերի յեկամուտը
պետք է հաշվել փոքր թե 200 ս. այլ միայն 70 ս.

ՏԵՆՆԻԿԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹՆԵՐԻ ՅԵՎ ԳՅՈՒ-
ՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՏՈՒԿ ՃՅՈՒՂՆԵՐԻ ԶԱՐ-
ԳԱՅՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՀԱՐԿԻՑ ԱԶԱՏՎՈՒՄ
ԵՆ

ա) չաքարի ճակնդեղի ցանքերը:

բ) ջրովի հողագործության չրջաններում
գեմի հողերի վրա կատարած բամբակի ցան-
քերը:

գ) 1930 և 1931 թ. թ. նոր հատկացրած
դեղին ծխախոտի և զույլասարի ցանքերը:

Այդ մշակույթները ազատվում են հարկից
2 տարով, յեթե ցանում են մեկտորացված հո-
ղերում, և 1 տարով, յեթե ցանում են առաջին
անգամ փոքր հողամասերում:

Որինակով պարզենք այդ նույն կոլտնտե-
սությունը ցանել է չաքարի ճակնդեղ, փոքրից
ստացվել է 5000 ս. յեկամուտ: Նա փոքր աշ-
խատանք թափելուց հետո մի հողամաս, փոք-
րությամբ բանջարանոցի սակ չի յեղել, հար-
մարեցրել է բանջարանոցի համար: Այդպիսի
հողամասերում յեկած բանջարանոցից ստա-
ցել է 4000 սուրլի յեկամուտ:

Բացի այդ բոլոր անասուններից ստացել է
 3000 ս. յեկամուտ:

Ուրեմն այդ կոլտնտեսության մնացած
ընդհանուր յեկամուտից (42.000 սուրլուց)
պետք է հանել 12.000 ս. և ց ($5000 + 4000 +$
 $3000 = 12.000$) ու մնացած 30.000 սուրլուց
միայն հաշվարկել հարկը:

Ավելի խոշոր արտոնությունն է տրվում
այն կոլտնտեսություններին, վորոնք ունեն
Այդպես որինակ՝ բամբակի, սոյայի, արևա-
ծաղիկի և մյուս յուղատու բույսերի, դեղին
ծխախոտի և դուլլասարի, քենդիրի, դենագեր-
չակի, կենաֆի, դեղածաղիկի, յեզիպտացորե-
նի, սորգոյի և չալթուկի ցանքերը, ինչպես
նաև բակլային բույսերի սերմաբուծարան-
ներն, բանջարանոցները, պտղատու այգիներ-
ը, խաղողի այգիները և հատաստուղ տըն-
կարանները հարկելու ժամանակ, այդ մշա-
կույթների ամեն մի հեկտար տարածության
ընդհանուր յեկամուտը հավասարեցվում է
նույն կոլտնտեսության մեկ հեկտար հացա-
հատիկային ցանքի ընդհանուր յեկամտին:

Ուրիշ խոտքով չնայած վոր խաղողի այ-
գին շատ ավելի բարձր յեկամուտ է տալիս
քան ցանքը, այնու ամենայնիվ խաղողի այգու
յեկամուտը համարադրեցվում է ցանքի յեկամ-
տին:

Որինակ՝ կոլտնտեսության մի հեկտար
ցանքը տվել է 200 ո. յեկամուտ, իսկ այգու
մեկ հեկտարը 800 ո.: Այգու յեկամտից գյուղ-
հարկի յենթակա յե վոչ թե 800 ո., այլ ընդա-
մենը 200 ո.:

Նույն արտոնությունը տարածվում է նաև
թված մյուս բոլոր մշակույթների վրա:

Այդպիսով յեթե մեր բերած որինակում
կոլտնտեսությունն ունենա նաև խաղողի այ-
գի, բանջարանոց, բամբակ և այլն, այդ մը-

շակույթների յեկամուտը պետք է վորոշվեն
այն ձևով, վորը ցույց է տված այս վերջին
որինակում՝ այլ վոչ թե հաշվապահության
համաձայն ստացած իրական յեկամտի հա-
մեմատ:

Սակայն կարող է պատահել, վոր այս կամ
այն պատճառով վորեւե մշակույթի (բամբա-
կի, այգու և այլն) 1 հեկտարի յեկամուտը
ավելի քիչ լինի քան 1 հեկտար ցանքի յեկա-
մուտը:

Նման դեպքերում, վորպեսզի կոլտնտե-
սությունը չտուժի, հարկի յենթակա յե ար-
դեն տվյալ մշակույթից ստացած իրական
յեկամուտը:

Որինակ՝ կոլտնտեսությունը 1 հեկտար
ցանքից ստացել է 200 ո. յեկամուտ, իսկ բամ-
բակի հեկտարից անբերրիության պատճառով,
ընդամենը ստացել է 50 ո.: Այս դեպքում
բամբակի յեկամուտն ընդունվում է 50 ո. և
այդ գումարն է հարկվում:

Կտավատի և կանեփի ցանքերի յեկամու-
տը վորոշվում է վոչ քե հացահատիկային
ցանքի յեկամուտի այլ նույնիսկ նրա կիսի չա-
փով և ապա հարկվում:

Այդպես որինակ, յեթե 1 հեկտար կտավ-
հատից կոլտնտեսությունը ստացել է 300 ո.,
իսկ հացահատիկի 1 հեկտարից 70 ո. յեկա-
մուտ, ապա ուրեմն կտավհատի յեկամուտը
հարկի յե յենթարկվում միայն 35 ո. յեկամտի
հաշվից (հացահատիկի կես յեկամտի չա-
փով):

Գյուղատնտեսական այլ հատուկ հյուղե-
բից հարկից ազատվում են

ա) շերամապահության յեկամուտները:

բ) Թթանոցների (թթենու ծառերով ծած-
կըված տարածությունների) յեկամուտները:

գ) մեղվաբուծության յեկամուտները:

դ) Թռչնաբուծության և հագարաբուծու-
թյան յեկամուտները:

Այդ բոլորից բացի ցանֆերի տարածու-
թյունն ընդարձակելու նպատակով կոլտնտ-
եսության 1930 թվի համեմատությամբ ավե-
լացած ցանֆի ամբողջ տարածությունն ա-
զատվում է հարկից:

Դա նշանակում է, Վոր յեթե ամեն մի կոլ-
տնտեսություն 1930 թ. ցանած լինի 60 հեկ-
տար, իսկ 1931 թվին 75 հեկտար հացահա-
տիկ, նրա 15 հեկտար ավելացած ցանքի յե-
կամուտը ազատվելու յե հարկից:

Դրա հետ միասին անցյալ տարի մշակ-
ված խամ և խոպան հողամասերի վրա կատա-
րած ցանֆերը նույնպես ազատվում են հար-
կից:

Միաժամանակ խոշոր արտոնություններ
են սահմանված նաև կոլտնտեսությունների
վոչ-գյուղատնտեսական յեկամուտների վե-
րաբերմամբ:

Որինակ՝ կոլտնտեսությունն ընդհանուր
յեկամտից դուրս են հանվում այն յեկամուտ-
ները, Վորոնք մասնակցում են կոլտնտեսու-
թյանը նրա տնդամների վոչ- գյուղատնտե-

նակուն յեկամուտներից, յեթե այդ յեկամուտ
ները գյուղհարկի յենթակա չեն:

Բացի այդ հարկից ազատվում են նաև կոլ-
տնտեսության այն տնայնագործական, ար-
հեստավորական կամ արդյունաբերական ձեռ-
նարկություններից ստացած յեկամուտները,
վոյոնֆ աշխատում են միայն կոլտնտեսու-
թյան սեփական կարիֆները բավարարելու
համար:

Այսպես յեթե մի կոլտնտեսություն յեն-
թադրենք ունի դարբնոց, վորը աշխատում է
կոլտնտեսություն համար, այդ դարբնոցի յե-
կամուտը ամբողջապես ազատ է հարկից:

Իսկ յեթե տնայնագործական, արհեստա-
վորական և արդյունաբերական այլ ձեռնար-
կությունները աշխատում են վոչ միայն կոլ-
տնտեսության այլև ուրիշ տնտեսությունների
համար, ապա դրանց ընդհանուր յեկամտից
հանվում է ձեռնարկության բոլոր տեսակի
արտադրական ձախֆերը, և մնացած մասն է
միայն յենթարկվում հարկի:

Դրա հետ միասին պետք է նկատի ունե-
նալ, Վոր վոչ բոլոր կոլտնտեսություններն են
յենթակա հարկի, այդպես որինակ բոլոր սա-
կավագոր կոլտնտեսությունները ազատվում
են հարկից: Այսինքն յեթե կոլտնտեսություն
մեջ չնչին ընկնող յեկամուտը 60 ո. ավել չի,
այդ կոլտնտեսությունը բոլորովին ազատ-
վում է հարկից: Դրանից բացի չըջհարկային
հանձնաժողովները կարող են ազատել հարկից

նաև աշխարհի սակավագուր կոլտնտեսություններ, վորոնց չնչին ընկնող յեկամուտը 60 ուրարձր եւ բայց վոչ ավելի 75 ուրբուց:

Միաժամանակ սակավագուր կոլտնտեսությունների մեջ ընդունված նոր անդամների հողերի յեկամտից զեջվում ե 75 տոկոս, յեթե այդ անդամները անցյալ 1930 թվին ազատված են յեղել դյուզարկից, վորպես սակավագուր անհատական տնտեսություններ:

Որինակ՝ մի կոլտնտեսության մեջ մտել են անցյալ տարի դյուզարկից ազատված 25 չքավոր տնտեսություններ, վորոնց չնչապատկան, յայժմ հանրայնացված հողերի վրա կատարված ե 50 հեկտար ցանք: Այդ 50 հեկտար ցանքից ստացած յեկամտից զեջվում ե 75 տոկոս ե մնացած 25 տոկոսը միայն յենթարկվում ե հարկի:

Այնուհետեւ պետք ե հատկապես ընդգծել, վոր կոլտնտեսությունների հարկման ձեւը հիմնովին կերպով տարբերվում ե անհատական աշխատավորական տնտեսությունները հարկի յենթարկելու ձեւից:

Անհատական աշխատավորական տնտեսությունների հարկման ժամանակ կիրառվում ե պրոգրեսիվ սկզբունք, իսկ կոլտնտեսությունների հարկը վորոջվում ե համեմատական (հարաբերական) չափով ե այդ պատճառով նույնպես կոլտնտեսությունների հարկը միշտ ել շատ պակաս ե լինում քան անհատական տնտեսություններին:

Կոլտնտեսությունները ե կոմմունաները իրենց յեկամտի ամեն մի ուրբուց հարկ են վճարում 3 կոպեկ:

Որինակ՝ յեթե կոլտնտեսությունը ունենա 60.000 ու. յեկամուտ, վորից արտոնությունների կարգով հանվի յենթադրենք 20.000 ու. տպա մնացած 40.000 ու. յեկամտից կոլտնտեսությունը պետք ե վճարի միայն 1200 ուրբի հարկ:

Առանձին, անհատական աշխատավորական տնտեսությունների հարկի հետ կոլտնտեսության հարկը նույնիսկ համեմատության զեւել չի կարելի, վորվհետեւ այդ դումարի հարկը անհատական տնտեսությունը պետք ե վճարեր վոչ թե 60.000 ու. յեկամտից, այլ միայն 4500 ու. յեկամտից:

Միառեղ հող մշակող ընկերությունները հարկ են վճարում ստացած յեկամտի ամեն մի ուրբուց 4 կոպեկ:

Վերջապես այն կոլտնտեսություններին, վորոնք լրիվ կը կատարեն ցանքի, մշակության ե բերքահավաքի արտադրական ծրագրերը, հաշվարկված հարկից ստանում են 10 տոկոս զեղչ:

Ահա այն խոշոր հիմնական արտոնությունները, վորոնք սահմանված են այս տարի կոլտնտեսությունների համար:

ԿՈՒՆՏԵՍԱԿԱՆՆԵՐԻՆ (ԿՈՒՆՏԵՍՈՒԹՅԱՆ
ԱՆԳՆԱՆՆԵՐԻՆ) ՏՐՎՈՂ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆ-
ՆԵՐՈՑ ՅԵՎ ՆՐԱՆՑ ՀԱՐԿՄԱՆ ԿԱՐԳԸ:

Կոլտնտեսականները (կոլտնտեսություն-
ների անդամները) յենթակա յեն հարկի միայն
այն դեպքում, յերը նրանք ունեն չհանրայն-
ացված յեկամախ աղբյուրներ:

Կոլտնտեսականները սպառում են այն բո-
լոր արտոնություններից, յորոնք սահման-
ված են անհատական տնտեսությունների հա-
մար:

Բացի այդ կոլտնտեսականներին համար
սահմանված են հետեւյալ լրացուցիչ արտո-
նությունները՝

ա) հարկից լրիւ ազատվում են այն կոլ-
տնտեսականները, յորոնք 1930 թ. ազատվել
են հարկից, յորպես սակավագոր անհատական
տնտեսություններ:

բ) հարկից լրիւ ազատվում են գյուղատն-
տեսական կոմմունայի, արտելի, յինչպես նաե
հանրայնացված տնտեսւն և յինվենտար ունե-
ցող միտակց հող մշակող ընկերության ան-
դամ տնտեսություններին պատկանող բոլոր
անասունները:

Ի՞նչ և նշանակում դա: Նշանակում և յոր
յեթե յորեմբ ընկերության մեջ բանող անա-
սունները հանրայնացված են, այդ դեպքում
նրա անդամների չհանրայնացված տնտեսու-
նները ազատվում են հարկից:

Մեկ մաս համարյա բոլոր կոլտնտեսական-

ների անհատական տնտեսության մեջ յեղած
անասունների յեկամուտը ազատվելու են հար-
կից, յորովհետե կոլտնտեսության անդամ-
ները յրենց բանող անասունները և յինվենտա-
րը հանրայնացրել են:


Կոլտնտեսականի յոչ- գյուղատնտեսա
կան յեկամուտներից հանվում Ե այն մասը,
յորնա հատկացնում Ե կոլտնտեսությանը, և
մնացած մասի յորոշ տոկոսն Ե միայն յեն-
թարկվում հարկի:

Ուրիշ խոսքով, յեթե յորեկ կոլտնտեսա-
կան ստացել Ե յոչ գյուղատնտեսական յեկա-
մաս գիցուք 800 ո., յորից կոլտնտեսությանն
և հատկացրել 200 ո., հարկի յենթակա յե յոչ
յե 800 ո. այլ միայն 600 ո. այն տուր, յորը
սահմանված Ե տվյալ յոչ-գյուղատնտեսական
յեկամուտը հարկելու համար:

Այն դեպքերում, յերը կոլտնտեսության
անդամը հաշվառման ժամանակ դադարել Ե
այն գործով զբաղվելուց, յորից նա յոչ-գյու-
ղատնտեսական յեկամուտներ Ե ստացել,
գյուղհարկային հանձնաժողովը կարող Ե այդ
յեկամուտը ազատել հարկումից:

Հարկից լրիւ ազատվում են նաե կոլտնտե-
սականներին պատկանող քթանցները:

Կոլտնտեսականները յիրենց չհանրայնաց-
ված յեկամասի աղբյուրներից հարկ են վնա-
րում ալելի ցածր դրույքներով, Բան անհա-
տական տնտեսությունները:



ԱՆՀԱՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՎՈՐԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒ-
ԹՅՈՒՆՆԵՐԻՆ ՏՐՎՈՂ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆ-
ՆԵՐԸ

Անհատական սակավագոր տնտեսությունները ազատվում են հարկից լրիվ կամ մասնակի չափով գյուղհարկային հանձնաժողովների վորոշմամբ:

Գյուղհարկի հաշվառման հետ միաժամանակ գյուղհարկային հանձնաժողովները պարտավոր են կազմել չքավոր տնտեսությունների ցուցակը, հատուկ ուշադրություն դարձնելով վոր նախկին կարմիր գվարդիականների և կարմիր պարտիզանների սակավագոր տնտեսությունները հարկից ազատվեն:

Այդ ցուցակները գյուղի չքավորներին, կորոնառականների և միջակների ակտիվ ընդհանուր ժողովներում քննության առկայության հետ, ներկայացվում են չրջհարկային հանձնաժողովին հաստատելու համար:

Բոլոր տնտեսությունները, վորոնց հարկաչափը մեկ ուրբուց ավելի է, ազատվում են հարկից առանց հանձնաժողովների քննություն:

Այսպիսով սակավագոր տնտեսություններին գյուղհարկից ազատելու կարգը այս տարի հիմնովին կերպով տարբերվում է անցյալ տարվա կարգից և իսկապես սակավագոր տնտեսությունները հարկից ազատելու հարցը

համարյա ամբողջությամբ թողնվում է տեղական կազմակերպություններին:

Սակավագոր տնտեսություններին հարկից ազատելու խնդրում վորոշ ուղղումներ մտցնելով, միջակ աշխատավորական տնտեսությունների նկատմամբ հարկը վորոշելու հիմունքները թողնված են անփոփոխ:

Անցյալ տարվա նման միջակ աշխատավորական տնտեսությունների համար ևս սահմանված են խոշոր արտոնություններ:

Մի չարք այնպիսի արտոնություններ, վորոնք տրվում են կոլտնտեսություններին, տարածվում են նաև միջակների վրա:

Այսպես որինակ՝ դաշտամշակությունը զարգացնելու և ցանքերը լայնացնելու նպատակով անհատական աշխատավորական տնտեսությունների 1930 թ. համեմատությամբ 1931 թ. ցանքի ավելացած ամբողջ տարածությունը ազատվում է հարկից:

Այս արտոնություններով սակայն չպետք ոգավեն այն տնտեսությունները, վորոնք բամբակագործական չրջաններում չրովի հողերի վրա ցանում են հացահատիկային բույսեր:

Խամ և խուպան հողերի վրա կատարած ցանքերը նույնպես ազատվում են հարկից, յեթե այդ հողերը մշակվել են առաջին անգամ 1930 կամ 931 թ-վին:

Այս արտոնությունը տրվում է աշխատավորական տնտեսություններին այն դեպքում,

յեթե նրանց ցանքի ընդհանուր տարածու-
թյունը 1930 թվի համեմատությամբ ավելա-
նում է խամ և խոպան հողերի վրա կատարած
ցանքի չափով:

Սակայն յեթե տնտեսությունը չնայած
ունեցած հնարավորություների ցանքը ավե-
լացնելու փոխարեն պակասեցնում է և դրանով
աճողին վնաս հասցնում թե պետությանը և
թե իրեն, այդպիսի տնտեսությունների հար-
կը հաշվվում է վոչ քե այս տարվա, այլ անց-
յալ տարվա համեմատ:

ՏԵՆԵԻԿԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹՆԵՐԻ ԶԱՐ- ԳԱՑՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՀԱՐԿԻՑ ԱԶԱՏՎՈՒՄ ԵՆ

1. Շարարի ճակնդեղի ցանքերը:

2. Արովի հողագործության շրջաններում
դեմի (անջրգի) հողերի վրա կատարած բամ-
բակի ցանքերը:

Բացի այդ բամբակի յեկամտարերության
նորման սահմանված է 52 ո. բոլոր դյուղե-
րում, չնայած վոր դրա իրական յեկամուտը
չստ ավելի բարձր է:

Անասնապահություը զարգացնելու հա-
մար, հարկից ազատվում են 1930 թվի համե-
մատությամբ 1931 թվին ավելացած բոլոր
արդյունավետ անասունները (կովեր, մա-
տակները, ցուլերը, վոչխարները):

Որինակ մի տնտեսություն յենթադրենք
ունեցել է 1930 թ. 2 կով, 2 յեղ և 20 վոչխար:

1931 թ. նա ունի 3 կով, 2 յեղ, և 30 վոչխար:
Նրա մեկ կովը և 10 վոչխարը բոլորովին հար-
կի չեն եյնթարկվելու:

Ստեփանավանի և Աղբարայի շրջաննե-
րում, վորտեղ զարգացած է կաթնատնտեսու-
կան արդյունաբերությունը կովերի, մատակ-
ների և ցուլերի յեկամտի նորմաները իջեցրած
են կիսով չափ այն տնտեսություների համար
վորոնք անասնապահության արտադրանքը
հանձնելու համար կնիել են կոնտրակտացիայի
պայմանագիր և լրիվ կատարել են այդ պար-
տականություը:

Ուրեմն՝ յեթե Աղբարայի շրջանում մեկ
կովի յեկամուտի նորման վորջված է 20 ո.,
սպա կոնտրակտացիայի պայմանագիրը կա-
տարած տնտեսության կովի յեկամուտը պետք
հաշվվի միայն 10 ուրլի:

Այդ նույն շրջանում կոնտրակտացիայի
պայմանագիր չկնքած տնտեսության կովի յե-
կամուտը պետք է հարկվի ընդհանուր հի-
մունքներով, այսինքն 20 ո. յեկամտի հաշ-
վով:

Գյուղիարկից ազատվում են նույնպես
այն յեկամուտները, վոր ստացվում են՝

Շերամապահությունից, թռչնորուծու-
թյունից, վորսորդությունից, խոզարուծու-
թյունից և ճաղարագործությունից:

Չկոնտրակտից ստացած յեկամուտ-
ները հարկի յենթակա յեն միայն այն դեպ-
քում, յերբ վորսած ձուկը կանգալապահու-

յի համաձայն չի հանձնվում պետական կամ կոպեքատիվ կազմակերպութ յուններին:

Հարկի յենթակա չեն նաև թթանոցների յեկամուտները, յեթե թուփը չի ոգտազործվում ողի թորելու համար, կամ թթի տերեվները չեն վաճառվում ուրիշ չերամպահ տրետեսութ յուններին:

Տնայնագործութ յունից, արհեստներից և դանադան աշխատանքներից ստացվող վոչգյուղատնտեսական յեկամուտները աշխատավորական տնտեսութ յուններում յենթակա յեն հարկի վոչ թե ամբողջութ յամբ այլ միայն մի մասով:

Այդպես որինակ արհեստավորների, արտայնագործների և կոշմեակի այլ աշխատավորական զբաղմունքներից ստացված յեկամուտները յենթակա յեն հարկի միայն 50 տոկոսի չափով:

Դիցուք մի կոշիակար մենակ աշխատելով անցյալ տարվա ընթացքում իր արհեստից ունեցել և զուտ յեկամուտ 600 ո. նրա այգ յեկամուտից հարկվելու էյ միայն 300 ո., այլ վոչ թե 600 ուրլին:

Սակայն կան այնպիսի արհեստավորներ, փորոնք հեռանալով իրենց մշտական բնակավայրից, զբաղվում են արհեստով ուրիշ վայրերում: Այդպիսի դրսում աշխատող արհեստավորների յեկամուտները հարկվում են ավելի պակաս չափով, այն է 40 տոկոսի հաշվով:

Բանվորների, ծառայողների և վարձու աշխատանք կատարողների աշխատավարձը հարկվում է ավելի արտոնված կարգով: Այն է մշտապես իրենց տնտեսութ յան մեջ ապրողների ստացած աշխատավարձից հարկվում է 15 տոկոսը:

Գյուղից դուրս ապրողների ստացած աշխատավարձից հարկվում է 10 տոկոսը:

Իսկ գյուղից դուրս վարձու աշխատանքով զբաղվող տնայնագործների և արհեստավորների աշխատավարձից հարկվում է 20 տոկոսը:

Տնայնագործների և արհեստավորների կողմնակի (վոչ-գյուղատնտեսական գրադմունքներից ստացած) յեկամուտները վորոշելիս հանվում են քալոր տեսակի արտադրական ծախսերը և միայն այդ ձևով վորոշված յեկամուտից է հաշվվում հարկի յենթակա յեկամուտի մասը:

Առանձնապես արտոնվում են անշխատների տնտեսութ յունները:

Հարկից բոլորովին ազատվում են այն անձանց տնտեսութ յունները, վորոնք մեկ տարով պարտավորութ յուն են վերցրել իրենց վրա անշխային հանքերում, ստորյերկրյա աշխատանքներ կատարելու համար:

Միտանական գյուղատնտեսական հարկի յենթակա չե նույնպես հեռույալ անձանց աշխատավարձը.

ա) չըջանային գործադիր կոմիտեների և

դյուզական խորհուրդների, ինչպես նաև բոլոր դյուզական վայրերում գլխավոր և պետական կամ տեղական բյուջեներով պահվող հիմնարկությունների, բանվորների և ծառայողների.

բ) փոխադարձ բյուրոթյան դյուզացիական ընկերությունների կոմիտեներում, նրանց համապատասխանող կազմակերպություններում և դյուզական ստորին կոոպերատիվներում ընտրովի պաշտոններ վարող անձանց.

գ) ավանային կոոպերատիվ կազմակերպիչներին.

ե) չրջանային դյուզատնտեսների ու խորհրդային տնտեսություններում և կոոպերատիվ կազմակերպություններում աշխատող դյուզատնտեսների, զոտախնդիրների, նրանց ոգնականների և հակիչ ասիստենտների.

զ) անտառապետների և նրանց սպնականների, անտառապահների և անտառային պահակների, դյուզական վայրերում և բանվորական ավաններում աշխատող չրջկոյտնոմիության բանվորների ու ծառայողների:

Բացի դրանից միասնական դյուզատնտեսական հարկի յենթակա չեն՝

ա) պարհակի կարգով կատարած աշխատանքի համար ստացվող վարձատրությունը.

բ) գրականագիտական մասնակները.

գ) Բանվոր-Գյուղացիական կարմիր Բանակի զինվորականների, միլիցիայի վարչական և չարքային, ինչպես նաև քրեական հետախու-

դության վարչական և տեխնիկ կազմի աշխատավորներին բոլոր տեսակի բավարարությունները:

դ) պետական հիմնարկներից ստացվող կենսաթոշակները.

Շահանքներով պարգևատրված անձանց, աշխատանքի հերոսների, Բ. Գ. կարմիր Բանակի (նույն թվում միացյալ Պետադվարչության գործառնների և ուղեկցող պահակայինների զինվորականների, հաշմանդամների, ինչպես նաև ուղևորականացված պահպանությաններում, միլիցիայում և քրեական հետախույզության մեջ ծառայող և մյուս անձանց տնտեսությունները, բացի վերելքից, ստանում են նաև հաշվարկված հարկից գեղջ հետեվյալ չափերով.

Յեթի տնտեսության հարկի չափը հաշված և	Յեթ յենթե տնտեսության մեջ կան ալ աշխատունակ աղամարդիկ	Կամ տնտեսության մեջ չկան ալ աշխատունակ աղամարդիկ
Զեղչվում և հարկից (տեղանքով)		
Մինչև 10 ուրբի . .	100%	100%
10 " մինչև 15 " . .	75 "	90 "
15 " 20 " . .	50 "	75 "
20 " 30 " . .	35 "	50 "
30 " 50 " . .	25 "	35 "
50 " 75 " . .	15 "	25 "
75 " 100 " . .	5 "	10 "
100 ուրբուց բարձր .	5 "	5 "

Որինակ՝ մի տնտեսություն ունի կարմիր բանակային անդամ և բացի այդ ընտանիքում

կա մի ուրիշ աշխատունակ տղամարդ: Նրա հարկի գումարը 25 ո. յե: Այդ 25 ո. պետք է զիջվի 35 տոկոս այսինքն 8 ո. 75 կ. և տնտեսությունը պետք է վճարի 16 ո. 25 կոպեկ:

Իսկ յեթե նույն ընտանիքում չլինեն ուրիշ աշխատունակ տղամարդ, բացի բանակայինից, 25 ո. հարկից պետք է զեղչվեր 50 տոկոս, այսինքն՝ 12 ո. 50 կոպեկ:

ԶԱՆԱԶԱՆ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Բացի վերահիշյալից մի շարք արտոնություններ են սահմանված նաև դադթականների, տարերային աղետներից վնասված և այլ տնտեսությունների համար:

Տարերային աղետներից առժամ առհասարակ տնտեսություն (բացի կուլակային) կարող է միջնորդություն հարուցել հարկից լրիվ ազատվելու կամ մասնակի զեղչ ստանալու մասին:

Աղետի հետևանքով հարկից՝ զեղչումներ կատարելու իրավունքը վերապահված է շրջանային հարկահանձնաժողովին, վորը տնտեսության կրած վնասի չափը պարզելով վորոշում է զեղչվող գումարի չափը:

Կուլակային տնտեսությունից առժամ տնտեսությունների համար սահմանված է ուրիշ արտոնություն:

Կուլակության դեմ կատարած յեղույթների համար կուլակներին կողմից սպանված անձանց այրիներին և անչափահաս զավակներին

պատկանող աշխատավորական տնտեսությունները ազատվում են հարկից 5 տարվա ընթացքում, յեթե նույնիսկ տնտեսության մեջ կան ուրիշ աշխատունակ անդամներ:

Նույնպիսի արտոնություններով ոգտվում են նաև իրենց պարտականությունների կատարման ժամանակ կամ կատարման հետևանքով սպանված անտառային աշխատողների այրիներին և անչափահաս զավակներին պատկանող տնտեսությունները, այսինքն մատնանշված անձանց մահից հետո 5 տարի շարունակ այդ տնտեսություններն ազատվում են հարկից:

Հատուկ արտոնություն է սահմանված նաև աշխատավորական այն տնտեսությունների համար, վորոնք իրենց խնամակալության կամ հոգատարության տակ ընդունել են վորեր կամ մանկատների սաներ ու նրանց դույրեր:

Բացի այդ գյուղհարկի նոր որենքով սահմանված են ելի մի շարք արտոնություններ թե անհատական աշխատավորական տնտեսությունների և թե կոլեկտիվ տնտեսությունների համար, սակայն այդ բոլորը միառմի թվելը չատ յերկար կտեվի և այդ պատճառով սահմանափակվում ենք նշված գլխավոր արտոնություններով:

Դրա հետ միասին չատ լավ պետք է հիշել նաև, վոր կուլակային տնտեսությունները

դ. յուղհարկի և վաչ մի արտոնութիւննց ոգա-
վելոս իրավունք չունեն: Ընդհակառակը ելի
անցյալ տարւոյ ահա նրանք հարկւում են ի-
րենց իրական յեկամուսներէ համեմատ ան-
հատական կարգով և շատ ավելի բարձր դը-
րույքներով:



364



ՀՀ Ազգային գրադարան



NL0212167

27606